ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՍՈՎԵՏԱ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ IV ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

1969 թ. նոյեմբերի 12—17-ը Երևանում կայացավ պատմաբանների սովետա-ֆրանսիական չորրորդ կոնֆերանսը։

Սովետական պատմաբանների ազգային կոմիտեի նախագահ, պատմական գիտությունների միջազգային կոմիտեի փոխնախագահ ակադ. Ա. Ա. Գուբերի բացման խոսքից հետո ողջույնի խոսք ասաց ՀՍՍՀ ԳԱ ակադ. Ա. Ռ. Հովհաննիսյանը։ Նա ընդգծեց, որ այս կոնֆերանսը կնպաստի ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի պատմաբանների փոխադարձ կապերի ամրապնդմանը։ Հայաստանի կառավարության անունից կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց ՀՍՍՀ բարձրագույն կրթության մինիստր Ա. Ասլանյանը։ Ակադ. Ժ. Շնեյդերը (Ֆրանսիա) շնորհակալություն հայտնեց ՀՍՍՀ Մինիստրների սովետին հյուրընկալության, Հայաստանի ակադեմիային տվյալ կոնֆերանսի կազմակերպման համար, և ընդգծեց հայ ժողովրդի նպաստը համաշխարհային քաղաքակրթության մեջ։

Կոնֆերանսում քննարկման էր դրված երեք պրոբլեմ. 1. Բյուզանդիա և Հայաստան, 2. Ֆրանսիական հեղափոխության պատմության ուսումնասիրության ներկա էտապը և 3. սովետա-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը 1924 թ.։

Առաջին պրոբլեմի վերաբերյալ կոնֆերանսի մասնակիցների ուշադրությանը ներկայացվեց երկու զեկուցում։ Սովետական կողմից՝ Հ. Բարթիկյանի, Ս. Բոնազյանի և Կ. Յուզբաշյանի ընդհանուր զեկուցումը, իսկ ֆրանսիական կողմից զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը։ Առաջին զեկուցման մեջ հեղինակները ընդգծում էին, որ միջնադարում հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներում հարևան և ոչ մի պետություն չի խաղացել այն դերը, ինչ Բյուզանդական կայսրությունը, ապա և որ Բյուզանդիայում հույներից հետո չի եղել մի ժողովուրդ, որ այդ պետության կյանքում ունենար այնքան մեծ դերը, ինչպիսին հայերը։ Հայաստանն ընկած էր Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև։ 387 թ. այդ երկու ախոյաններին հաջողվեց իրար մեջ բաժանել Հայաստանը, որով դրվեց Հայաստանի միասնության խախտման և երկու մասերի բաժանման սկիզբը։ Կայսրությունը Հայաստանի իր բաժնում ծավալեց մի քաղաքականություն, որ Հուստինիանոս Ա-ի հրովարտակներում ձևակերպված էր հետևյալ բառերով. «Որ հայերն էլ ամեն ինչում հետևեն հռոմայեցիների օրենքներին»։ Երկրում տարածվեց բյուզանդական կարգն ու կանոնը, ծանր հարկապահանջությունը։ Խարխլվում էր հայոց դարավոր ժառանգական իրավունքը, նախարարական կարգը։

Եթե Բյուզանդիան քաղաքականապես այս շրջանում Հայաստանի վրա բացասաբար ազդեց, ապա մշակույթի տեսակետից ազդեցությունը բարենպաստ էր։ Հայերեն գրերի գյուտի, հայկական ինքնուրույն և թարգմանական գրականության առաջացման մեջ բյուզանդական մշակույթը զգալի դեր է խաղացել։

VII դարից սկսած Հայաստանը ավելի քան երկու հարյուր տարով անցավ արաբական գերիշխանության ներքո. հայ-բյուզանդական հարաբերությունները շարունակվեցին այլ ուղղությամբ։ Հայաստանում ստեղծված ծանր վիճակը պատճառ դարձավ դեպի Բյուզանդիա հայերի կատարած արտագաղթի է՛լ ավելի լայն ծավալ ստանալուն։ Բյուզանդիայում ապաստանած հայ տարրը աշխուժանում է։ Հայերը VIII—IX դարերում տիրանում են նույնիսկ բյուզանդական գահին։ 867 թ. հայազգի Վասիլը հիմնադրում է Մակեդոնական կոչված հարստությունը, որի շուրջ երկուդարյա իշխանության ժամանակաշրջանը իրավամբ բյուզանդական պատմության բարձրագույն շրջանն է համարվում։ Հայերը կարևոր դեր են խաղում նաև հոգևոր և մշակութային ասպարեզում։ Հայազգի կեսար Վարդասը հիմնադրում է Մագնավրայի համալսարանը, որի ղեկավարը և բաղմաթիվ ուսուցիչներ հայեր էին։

Օգտվելով արաբա-բյուզանդական պատերազմից, Աշոտ Բագրատունին 862 թ. իրեն իշխանաց իշխան հռչակեց, իսկ 885 թ.՝ նաև թագավոր։ Վասիլ Ա-ն շատ էր շահագրգռված բարեկամական կապեր հաստատելու Աշոտ Բագրատունու հետ արաբների դեմ դաշնակից ունենալու համար։ Թեև արտաքնապես այդ հարաբերությունները բարեկամական էին, բայց իրականում հայերը մահու և կենաց կռիվ էին մղում։ Կայսրությունը բաց չէր թողնում և ոչ մի առիթ Հայաստանի նվաճումն իրականացնելու համար։ Մինչև 1065 թ. նրան հաջողվում է աստիճանաբար նվաճել գրեթե ամբողջ Հայաստանը։ Տիրանալով Հայաստանին, Բյուզանդիան առաջին գործը համարեց բնիկ ավագանուն տեղահան անելը, նրա փոխարեն բյուզանդացի ֆեոդալներ բնակեցնելով երկրում։ Հայաստանը բաժանվեց ռազմա-քաղաքական առանձին շրջանների, որոնք կատապանություններ էին կոչվում։ Բյուզանդիան Հայաստանում ցրեց հայկական զորքերը, դրա փոխարեն զինվորական հարկ մտցնելով։ Սկիզբ առան կրոնական հալածանք-

ները։ Նման քաղաքականությունը, սակայն, ի վերջո ճակատագրական դարձավ հենց իրեն՝ կայսրության համար։ Նա վերացրեց այն պատնեշը, որ փակում էր դեպի Բյուզանդիա ձգտող թշնամական հորդաների ճանապարհը։ Երբ XI դարի 1-ին տասնամյակներում երևացին սելջուկ թուրքերը, կայսրությունը ի վիճակի չեղավ նրանց առաջն առնել, իսկ Հայաստանն էլ զրկվել էր այդ կարողությունից։ 1071 թ. տեղի ունեցավ Մանազկերտի ճակատամարտը, որը Բյուզանդիայի վերջի սկիզբը դարձավ։

Հայ-բյուզանդական հարաբերությունների այս երկրորդ շրջանում էլ, հակառակ քաղաքական ու դավանաբանական սուր պայքարին, տնտեսական և մշակութային կապերը Բյուզանդիայի և Հայաստանի միջև զարգանում էին բավականին բարենպաստ կերպով։ Հայերի ռազմա-քաղաքական գործունեությունն էլ Բյուզանդիայում հասնում է իր գագաթնակետին։ Ռոմանոս Լեկապենոս, Նիկեֆոր Փոկաս, Հովհան Զմշկիկ, Վասիլ Բ, Մլեհ, Հովհան Կուրկուաս հայազգի կայսրերի ու զորավարների անունները փայլեցին կայսրության մեջ այս շրջանում։

Թեև սելջուկների Փոքրասիական թերակղզուն տիրանալը բուն երկրում հայ-բյուզանդական հարաբերություններին վերջ դրեց, այնուամենայնիվ այդ հարաբերությունները շարունակվեցին Կիլիկիայում, որտեղ հայության մի ստվար զանգված ստեղծել էր իր անկախ իշխանությունը, ապա և թագավորությունը։ Հայ-բյուզանդական հարաբերություններն այնտեղ այնքան սերտ էին, որ XII դարի երկրորդ կեսից նորից սկիզբ առան երկու եկեղեցիների միության ադՑիվ բանակցությունները։ XIV դարի վերջում Կիլիկիայի հայկական պետությունը դադարեց գոյություն ունենալուց, դրա հետ մեկտեղ վերջ գտան նաև հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունները, թեև դրանից հետո մինչև Բյուզանդական կայսրության անկումը հայ տարրը շարունակում էր կարևոր դեր խաղալ Բյուզանդիայի կյանքում։

Վերջում զեկուցման մեջ մանրամասն խոսվեց հայոց պատմության ուսումնասիրության ուղղությամբ հայ և ֆրանսիացի բյուզանդագետների կատարած աշխատանքի մասին, Հայաստանի և Բյուզանդիայի պատմության ուսումնասիրության համար բյուզանդական և հայկական սկզբնաղբյուրների կարևոր նշանակության մասին, նշվեցին այն խնդիրները, որոնք պետք է ավելի խոր ուսումնասիրության առարկա դառնան (սկզբնաղբյուրների հրատարակություն, թարգմանություններ և այլն)։

Ֆրանսիական կողմից «Բյուզանդիա և Հայաստան։ Խնդիրներ և ուսումնասիրություններ արդի վիճակը» թեմայով բովանդակալից զեկուցում կարդաց ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ, պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը։ Նա կանգ առավ ոչ միայն հայ-բյուզանդական դարավոր հարաբերությունների ամենատարբեր կողմերի և բնագավառների վրա, այլև մանրամասն կերպով ներկայացրեց այդ ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդի վիճակը*։

Առաջին պրոբլեմի առթիվ հայ-բյուզանդական հարաբերությունների տարբեր բնագավառների հարցերին նվիրված ելույթներ եղան։ Հանդես եկան Կ. Յուզբաշյանը (Լենինգրադ), Հ. Բարթիկյանը (ԳԱ պատմության ինստիտուտ), Ա. Տեր-Ղևոնդյանը (ԳԱ պատմության ինստիտուտ), ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը, Ս. Աբեղյանը (Մատենադարան), Լ. Ազարյանը (ԳԱ արվեստի ինստիտուտ), բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Դ. Խաչերյանը (Մատենադարան)։

Երկրորդ պրոբլեմի («Ֆրանսիական հեղափոխության պատմության ուսումնասիրության արդի էտապը») մասին սովետական կողմից զեկուցում կարդաց պրոֆ. Ա. Զ. Մանֆրեդը։ Նա մանրամասն կանգ առավ Ռուսաստանում ֆրանսիական հեղափոխության պատմությամբ զբաղված բազմաթիվ հեղինակների գործերի վրա։ Նշեց, որ այդ հարցը հուզել էր Ա. Ս. Պուշկինին, որը նպատակ էր դրել գրելու ֆրանսիական մեծ հեղափոխության պատմությունը, մի բան, որ այդպես էլ չիրականացավ։ Այդ հեղափոխությանը մեծ հետաքրքրությամբ էին վերաբերվում դեկաբրիստները, Գերցենը, Բելինսկին, Գ. Վ. Պլեխանովը և հատկապես Վ. Ի. Լենինը։ Այժմ, ընդգծեց զեկուցողը, առանց Լենինի գործերի հնարավոր չէ ֆրանսիական հեղափոխության ուսումնասիրությունը, հատկապես մեթոդոլոգիական տեսակետից։ Լենինը ցույց տվեց, որ բուրժուական հեղափոխության շարժիչ ուժը միայն բուրժուազիան չէր, այլ հասարակության ցածր խավերի ամբողջությունը։ Դիկտատուրա և դեմոկրատիա հասկացությունները, որ դիտվում էին որպես հակոտնյա, Լենինը մոտեցրեց իրար և առաջ քաշեց «Յակոբինյանների դեմոկրատական դիկտատուրա» հասկացությունը։ Զեկուցողն այնուհետև ընդգծեց Տարլեի, Կարեևի, Կովալևսկու, ինչպես և Վ. Պ. Վոլգինի դերը տվյալ հարցի ուսումնասիրության գործում։ Վոլգինը գլխավորեց ֆրանսիական հեղափոխության պատմությունն ուսումնասիրող սովետական պատմաբաններին, որոնց աշակերտները մեծ նպաստ

---

* Ս. Տեր-Ներսեսյանի զեկուցումը տպագրվում է «Պատմա-բանասիրական հանդեսի» այս համարում։

բերին հարցի հետագա ուսումնասիրության գործում։ Ա. Մանֆրեդը մատնացույց արեց այն հարցերը, որոնք հետազոտության կարիք ունեն, այն է՝ ֆրանսիական հեղափոխության նախապատրաստությունը՝ Ֆրանսիայի տնտեսությունը նախքան հեղափոխությունը, արդյունաբերական հեղաշրջումը Ֆրանսիայում, հարցի սոցիալական ասպեկտը և այլն։ Վերջում Մանֆրեդը մանրամասն ծանոթացրեց ֆրանսիական հեղափոխության տարբեր հարցերի քննության վերաբերյալ սովետական այն ուսումնասիրություններին, որոնք վերջին շրջանում լույս են տեսել ՍՍՀՄ-ում։

Ֆրանսիական կողմից տվյալ պրոբլեմի շուրջ զեկուցում կարդաց պրոֆ. Ժ. Գոդշոն։ Նա ամենից առաջ տեղեկացրեց, թե Ֆրանսիայում հեղափոխության պատմությամբ զբաղվող հատուկ ամբիոն կա Սորբոնի համալսարանում, ստեղծված են առաձին ընկերություն, որն ուսումնասիրում է Ռոբեսպիերի գործունեության պատմությունը, ֆրանսիական հեղափոխության շրջանի սոցիալ-տնտեսական պատմությամբ զբաղվող հատուկ հիմնարկություն, որի ստեղծողը Ժորեսն էր, կա առանձին ինստիտուտ, որն ուսումնասիրում է միմիայն Նապոլեոնի պատմությունը և այլն։ Վերոհիշյալ հարցերով հատուկ զբաղվում են նաև Իտալիայում, Բելգիայում, Հոլանդիայում և այլուր։ Հետաքրքրությունների շրջանակներն են մեթոդոլոգիական, պատմագրական, փաստագրական, նաև սոցիալ-տնտեսական հարցերը։ Զեկուցողը կանգ է առնում ֆրանսիական հեղափոխության պատմությամբ զբաղվողների տարբեր կոնցեպցիաների վրա (կոնսերվատիվ, կլասիկ և այլն), ապա նշում ֆրանսիական հեղափոխության ազդեցությունը Եվրոպայի և Ամերիկայի մի շարք երկրների, այնտեղ ծավալված հեղափոխական շարժումների վրա և այլն։

Երկրորդ պրոբլեմի վերաբերյալ նյութ ունեցան Ա. Սորելը (Ֆրանսիա), ակադ. Աբգար Հովհաննիսյանը, Իվ. Դյուրանը (Ֆրանսիա), պրոֆ. Ա. Լ. Նարոչնիցկին (ՍՍՀՄ), պրոֆ. Ա. Ադոն (ՍՍՀՄ), պրոֆ. Բ. Ֆ. Պորշնևը (ՍՍՀՄ)։

Վերջին՝ երրորդ պրոբլեմը նվիրված էր 1924 թ. ֆրանս-սովետական դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարցին։ Ֆրանսիական կողմից զեկուցում կարդաց ակադ. Մ. Բոմոնը, որը նախ և առաջ ընդգծեց ֆրանսիական ժողովրդի լայն խավերի պահանջը այդ շրջանում՝ վերջ տալու Ֆրանսիայի միջամտությանը Սովետական Ռուսաստանի ներքին գործերին։ Կանգ առնելով ֆինանսական շրջանների բռնած դիրքի վրա, նա հայտնեց, որ վերջիններս, համոզված լինելով սովետական պետության կայունության մեջ, պահանջ էին դնում ճանաչել Սովետական Ռուսաստանը, ակնկալելով ձեռք բերել ռուսական շուկան։ Շրջադարձային նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի մասնակցությունը Ժենովայի, ինչպես և Ռապալոյի կոնֆերանսին։ Վերջինում կանոնավորվեցին Ռուսաստանի հարաբերությունները Գերմանիայի հետ։ Ֆրանսիան Ռուսաստանին ճանաչելու նախապայման էր դնում սովետական կառավարության կողմից ցարական պարտքերի ընդունումը, ինչպես և Ռուսաստանում ֆրանսիական հիմնարկությունների ազգայնացված դույքի համար փոխհատուցումը։ Սովետները հրավեր են ստանում մասնակցելու Լոզանի կոնֆերանսին՝ նեղուցներին նվիրված հարցի առթիվ։ 1924 թ. Սովետական Ռուսաստանին ճանաչում են Անգլիան, ապա Իտալիան։ Ֆրանսիական մի շարք թերթեր արդեն սկսում են հոդվածներ տպագրել Ռուսաստանի հետ առևտրական կապեր հաստատելու օգտակարության մասին։ 1924 թ. մայիսին Ֆրանսիայում ընտրությունների ժամանակ հաջողություն է ունենում ձախ բլոկը էդ. Էրիոյի գլխավորությամբ։ Նոր կառավարությունը փոխում է իր դիրքը Սովետական Ռուսաստանի նկատմամբ և շուտով, 1924 թ. հոկտեմբերի 28-ին Ֆրանսիան ճանաչում է Սովետական Ռուսաստանին և հաստատում դիվանագիտական հարաբերություններ, որոնք հիմնված էին մեկը մյուսի ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի վրա։

Սովետական կողմից այդ պրոբլեմի մասին զեկուցում կարդաց պատմ. գիտ. թեկնածու Ա. Զուրարյանը։ Նախ և առաջ նա անդրադարձավ այն հարցին, թե ինչպես էր մոտենում սովետական կառավարությունը Ռուսաստանի և Ֆրանսիայի դիվանագիտական հարաբերությունների վերականգնմանը։ Խնդիրն այն էր, թե հնարավո՞ր է արդյոք, որ հաղթանակած սոցիալիզմի երկիրը կապեր հաստատի կապիտալիստական աշխարհի հետ։ Վ. Ի. Լենինը հիմնավորեց սովետական երկրի իրավունքը՝ հարաբերություններ ունենալ արտաքին աշխարհի հետ։ 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին մշակվեցին այն պլանները, որոնց հիման վրա հնարավոր էր դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը։ 1920 թ. սովետական պետությունը ակտիվ աշխատանք է տանում տարբեր պետությունների հետ «խաղաղ համակեցության» ուղղությամբ։ 1921 թ. առևտրական հարաբերությունների հաստատումը Անգլիայի հետ և Ռապալոյի կոնֆերանսը ճեղքվածք էին Ռուսաստանի մեկուսացման ուղղությամբ կապիտալիստական պետությունների վարած քաղաքականության մեջ։ Զեկուցողը ցույց տվեց, որ դեռ 1920 թ. սկսած սովետական ներկայա-

ցուցիչները ընդգծում էին Ֆրանսիայի հետ հարաբերությունների վերականգնման ցանկալի լինելը և որ Ժենովայի կոնֆերանսում սովետական պատվիրակությունը առաջադրանք ուներ աշխատել հարաբերությունների վերականգնման ուղղությամբ ոչ միայն Անգլիայի, այլև Ֆրանսիայի հետ, հարաբերություններ, որոնք Ֆրանսիայի հետ հաստատվեցին 1924 թ. հոկտեմբերի 28-ին։ Ա. Զուբարյանը վերջում կանգ առավ այդ հարաբերությունների վերականգնման հոգեբանական գործոնների ազդեցության վրա, և առաջին հերթին այն բանի, որ Ֆրանսիան Ռուսաստանի ավանդական բարեկամն էր։ Զեկուցողը նշեց նաև տվյալ հարցին նվիրված սովետական նոր ուսումնասիրությունները։

ելույթներ ունեցան Զ. Ս. Բելոուսովան (ՍՍՀՄ) և պատմ. գիտ. թեկնածու Լ. Գ. Մանասերյանը (ՍՍՀՄ)։

Պատմաբանների սովետա-ֆրանսիական չորրորդ կոնֆերանսի արդյունքները ամփոփեցին ակադ. Գուբերը և ակադ. Շենյդերը։ Նրանք ընդգծեցին կոնֆերանսում կարդացված զեկուցումների և ելույթների գիտական բարձր մակարդակը, կոնֆերանսի նշանակությունը սովետական և ֆրանսիական ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման ու զարգացման գործում, շնորհակալություն հայտնեցին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիային և հատկապես ակադ. Արգար Հովհաննիսյանին՝ աշխատանքների լավ կազմակերպման և հաջող անցկացման համար։

Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ